ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դեկտեմբերի 2024 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի №237-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, 28-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 19-ի №180Ն որոշմամբ հաստատված կարգը և հաշվի առնելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի հոկտեմբերի 31-ի №2/2-040 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 19-ի «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2024-2033 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №237Ա որոշման՝
   1) 1-ին կետում «№№1-5» թվերը փոխարինել «№№1-7» թվերով,
   2) 1-ին կետով հաստատված №№1-4 հավելվածների 2024 թվականի հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման №№1-4 հավելվածների, №5 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման №5 հավելվածի և որոշումը լրացնել №6 և №7 հավելվածներով՝ համաձայն սույն որոշման №6 և №7 հավելվածների,
   3) 2-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) «Քանաքեռ» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 33,8 մլն դրամ,»,

4) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ ենթակետերով.

«6) «Երևան ՀԷԿ-1» հիդրոէլեկտրակայանի վերազինման աշխատանքների իրականացում՝ 226,5 մլն դրամ,

7) Բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով իրականացվելիք ներդրումներ՝ 173,3 մլն դրամ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
դեկտեմբերի 2024թ.